ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան
07.05.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-13/14 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-13/14 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից 17.04.2014թ. ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-13/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 17.04.2014թ. ներկայացված բողոքով «Արպանիվ» ՍՊԸ-ն հայտնել է, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն 26.03.2014թ. հայտարարել է «ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-14/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

Ուսումնասիրելով հրավերը՝ «Արպանիվ» ՍՊԸ-ին պարզ է դարձել, որ այն բաղկացած է 6 չափաբաժիններից, սակայն յուրաքանչյուր չափաբաժին իր մեջ պարունակում է մի քանի առանձին տեխնիկական բնութագրեր ունեցող ապրանքներ: Տվյալ ընթացակարգում վերջինիս հետաքրքրել են կուտակիչային մարտկոցները և անվադողերը, որոնք, ըստ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի պահանջի, խմբավորված են եղել 5-րդ և 6-րդ չափաբաժիններում: 5-րդ չափաբաժնում ներառված է եղել 5 (հինգ) տեսակի մարտկոց, իսկ 6-րդ չափաբաժնում՝ 12 (տասներկու) չափատեսակի անվադողեր, սակայն, ըստ կարգի, այդ երկու չափաբաժիններում խմբավորված ապրանքները պետք է բաժանված լինեին 17 (տասնյոթ) առանձին

«Արպանիվ» ՍՊԸ-ն, նախապես իմանալով, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ըստ շրջանակային համաձայնագրերի կանոնների արգելվում է տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող ապրանքները միավորել մեկ չափաբաժնում, ուստի գնային առաջարկը ներկայացնելուց յուրաքանչյուր ապրանք ներկայացրել է առանձին:

Նշված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2014թ. ժամը 12:00-ին կայացած նիստի ժամանակ հայտերը բացվելուց հետո հայտարարվել է, որ փաթեթները և դրանց մեջ առկա փաստաթղթերը համապատասխանում են ընթացակարգի պահանջներին, սակայն, եթե հանձնաժողովն իրավունք ունենար խմբավորելու վերոհիշյալ ապրանքները մեկ չափաբաժնում, ապա «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը պետք է մերժվեր, ինչը հանձնաժողովի կողմից չի կատարվել, սակայն հաղթող մասնակցին որոշելու համար հանձնաժողովը հիմք է ընդունել միավորված ապրանքների ամբողջ խմբաքանակի ընդհանուր գինը, մինչդեռ, եթե գնահատեր առանձին-առանձին, Ընկերությունն այդ 17 (տասնյոթ) ապրանքատեսակից 11-ով (տասնմեկ) կճանաչվեր հաղթող, սակայն տվյալ դեպքում վերջինս ոչինչ չի շահել:

«Արպանիվ» ՍՊԸ-ն գտնում է, որ ի սկզբանե հայտարարված գնման ընթացակարգի փաստաթղթերում առկա են եղել կոպիտ խախտումներ, ինչի հետևանքով ավելի էժան գին առաջարկած մասնակիցը չի ճանաչվել ընտրված մասնակից, որի հետևանքով պետությանը պատճառվում է վնաս՝ նույն ապրանքն ավելի էժան ձեռք բերելու հնարավորություն ունենալով, ստիպված է եղել ձեռք բերել ավելի թանկ գնով: Այս կերպ խախտվել է մասնակիցների միջև մրցակցության սկզբունքը:

«Արպանիվ» ՍՊԸ-ն գտնում է, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ կետը, որի համաձայն՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնումները որպես մեկ չափաբաժին, եթե դրանք կարող են ներկայացվել գնման նույն ընթացակարգի առանձին չափաբաժիններով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ և 45-ից 49-րդ հոդվածների դրույթներով՝ Ընկերությունը խնդրել է չեղյալ համարել «ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-14/15» ծածկագրով մրցույթը:

2. **<u>«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 23.04.2014թ. N 04/032-726 գրությամբ դիմել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 17.04.2014թ. «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն 25.04.2014թ. N 13-01/397 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն քննարկել է «ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-14/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը: Ընկերությունը հայտնել է, որ ավտոմեքենաների, անվադողերի և մարտկոցների չափաբաժինները որոշելիս հիմք են ընդունել ՀՀ ֆինանսների նախարարի 13.04.2011թ. N 220-Ն հրամանով հաստատված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկը: Ցանկում գնման առարկայի անվանումը հետևյալն է՝ ավտոպահեստամասեր, որի համարն է 1.6, իսկ ենթահամարներն են՝ անվադողեր 1.6.11 և էլեկտրասարքավորումներ 1.6.10: Նաև նշել է, որ նշված ցանկում ներառված են ապրանքախմբեր, որոնցից յուրաքանչյուրը ներառում է առանձին ապրանքատեսակներ:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն նշել է, որ եթե «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բողոքում տեղ գտած անհամապատասխանություններն ընդունելի են, ապա «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կկատարվեն անհրաժեշտ շտկումներ և սահմանված կարգով կհրապարակվի հայտարարություն՝ համապատասխան փոփոխություններով:

3. ԳԲԽ-13/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից 17.04.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել. Ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով դադարեցնել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով

կազմակերպված «ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-14/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը:

4. ԳԲԽ-13/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-13/14 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Արպանիվ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) 17.04.2014թ. ներկայացրած բողոքը, «ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-14/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-14/15» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2014թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 02 արձանագրությունը, «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) կողմից 25.04.2014թ. ներկայացված N 13-01/397 գրությունը և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) եզրակացությունը:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով 26.03.2014թ. կազմակերպվել է «ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-14/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), որը բաղկացած է եղել թվով 6 չափաբաժնից:

Ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժիններին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ կազմակերպությունների, հայտ է ներկայացրել նաև «Արպանիվ» ՍՊԸ-ն:

«Արպանիվ» ՍՊԸ-ն 17.04.2014թ. Կենտրոնին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-14/15» ծածկագրով ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժին իր մեջ պարունակել է մի քանի առանձին տեխնիկական բնութագրեր ունեցող ապրանքներ, մասնավորապես, Ընթացակարգի 5-րդ չափաբաժնում ներառված են եղել հինգ տեսակի մարտկոց, իսկ 6-րդ չափաբաժնում՝ տասներկու չափատեսակի անվադող, որոնցից յուրաքանչյուրի համար սահմանված է եղել առանձին բնութագիր:

Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժիններում ընդգրկված թվով տասնյոթ ապրանքատեսակի համար ներկայացրել է առանձին գնային առաջարկներ:

Բողոքաբեր Ընկերությունը հայտնել է, որ նշված Ընթացակարգի գնահատող

արձանագրությամբ որոշում է կայացրել Ընկերության հայտը գնահատել բավարար, սակայն տվյալ դեպքում, քանի որ Պատվիրատուն առանձին տեխնիկական բնութագրեր ունեցող ապրանքները խմբավորել է մեկ չափաբաժնում, ապա «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը պետք է մերժվեր:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն հաղթող մասնակից է ճանաչել չափաբաժնի ապրանքների ամբողջ խմբաքանակի համար ընդհանուր գին առաջարկած մասնակցին, մինչդեռ, եթե հայտերը գնահատեր յուրաքանչյուր ապրանքի համար առանձին ներկայացված գնային առաջարկով, ապա «Արպանիվ» ՍՊԸ-ն նշված տասնյոթ ապրանքատեսակից տասնմեկով կճանաչվեր որպես ընտրված մասնակից:

Պատվիրատուն 25.04.2014թ. Կենտրոնին ներկայացրած N 13-01/397 գրությամբ հայտնել է, որ «ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-14/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի չափաբաժինները որոշելիս հիմք է ընդունել ՀՀ ֆինանսների նախարարի 13.04.2011թ. թիվ 220-Ն հրամանով հաստատված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկը:

Պատվիրատուն նշել է, որ տվյալ ցանկում գնման առարկայի համար սահմանվել է հետևյալը. համարը՝ 1.6, անվանումը՝ ավտոպահեստամասեր, ենթախմբի հերթական համարը՝ 1.6.10 և 1.6.12, ենթախմբի նկարագրությունը՝ համապատասխանաբար՝ էլեկտրասարքավորումներ և անվադողեր:

Այսպիսով, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով 26.03.2014թ. կազմակերպված «ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-14/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող տեխնիկական բնութագրի 5-րդ չափաբաժնով սահմանվել է առանձին բնութագրեր ունեցող թվով 5 մարտկոց, իսկ 6-րդ չափաբաժնով սահմանվել է առանձին բնութագրեր ունեցող թվով 12 անվադող:

Մասնավորապես, 5-րդ չափաբաժնով սահմանվել են մարտկոցների հետևյալ առանձին տեխնիկական բնութագրեր.

1. 6ст 60-65A-12V-(278x175x176) Կապարա-թթվային ստարտերային, կուտակչային մարտկոց մարդատար ավտոմեքենայի համար ԳOUS 2911-91՝ 7 հատ,
2. 6ст 70-75A-12V-(315x175x192) Կապարա-թթվային ստարտերային, կուտակչային մարտկոց մարդատար ավտոմեքենայի համար ԳOUS 2911-91՝ 9 հատ,

3. 6ст 90-100A-12V-(315x175x192) Կապարա-թթվային ստարտերային, կուտակչային մարտկոց մարդատար ավտոմեքենայի համար ԳՕՍՏ 2911-91՝ 3 հատ,

4. 6ст 70-85A-12V-(513x175x192) Կապարա-թթվային ստարտերային, կուտակչային մարտկոց մարդատար ավտոմեքենայի համար՝ 4 հատ,

5. 6ст 110-120A-12V-(513x192x207) Կապարա-թթվային ստարտերային, կուտակչային մարտկոց բեռնատար ավտոմեքենայի համար՝ 3 հատ:

6-րդ չափաբաժնով սահմանվել են անվադողերի հետևյալ առանձին տեսակներ՝ համապատասխան տեխնիկական բնութագրերով.

1. անվադողեր ԳԱԶ-31029 ավտոմեքենայի համար՝ 4 հատ,

2. անվադողեր ՎԱԶ-21214 ավտոմեքենայի համար՝ 36 հատ,

3. անվադողեր ԳԱԶ-3110 ավտոմեքենայի համար՝ 4 հատ,

4. անվադողեր ԳԱԶ-3110 ավտոմեքենայի համար՝ 4 հատ,

5. անվադողեր ՈՒԱԶ ավտոմեքենայի համար՝ 20 հատ,

6. անվադողեր Տոյոտա Պրադո ավտոմեքենայի համար՝ 4 հատ,

7. անվադող ԳԱԶ 53 ավտոմեքենայի համար՝ 10 հատ,

8. անվադող ԳԱԶ 66 ավտոմեքենայի համար՝ 12 հատ,

9. անվադող ՎԱԶ 21214 ավտոմեքենաների համար՝ 24 հատ,

10. անվադող ՈՒԱԶ ՋԻՊ ավտոմեքենայի համար՝ 4 հատ,

11. անվադող ԵՐԱԶ ավտոմեքենայի համար՝ 4 հատ,

12. անվադող ԶԻԼ-130 ավտոմեքենայի համար՝ 8 հատ:

«ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-14/15» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2014թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 02 արձանագրության 2-րդ կետով որոշում է կայացվել Ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժիններով որպես 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Արպանիվ» ՍՊԸ-ին և հիմք ընդունելով չափաբաժնի ապրանքների ամբողջ խմբաքանակի համար առաջարկված նվազագույն գինը՝ 5-րդ չափաբաժնով որպես ընտրված մասնակից է ճանաչել «ԷԼԲԱՏ» ՓԲԸ-ին, իսկ 6-րդ չափաբաժնով՝ «Արևշատի Սարգիս» ՍՊԸ-ին:

Այսպիսով, հաղթող մասնակցին որոշելու համար հանձնաժողովը հիմք է ընդունել միավորված ապրանքների ամբողջ խմբաքանակի ընդհանուր գինը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 12-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների

Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնումները որպես մեկ չափաբաժին, եթե դրանք կարող են ներկայացվել գնման նույն ընթացակարգի առանձին չափաբաժիններով:

«ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-14/15» ծածկագրով ընթացակարգի տեխնիկական բնութագրի մեկ չափաբաժնում ներառելով ըստ էության տարբեր բնութագրեր ունեցող ապրանքատեսակներ և պահանջելով գնային առաջարկը ներկայացնել չափաբաժնում ներառված բոլոր ապրանքատեսակների համար, այլ ոչ թե առանձին ապրանքատեսակների համար՝ Պատվիրատուն խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 22-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը Գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից 17.04.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել:

2. Ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով դադարեցնել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-14/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գոռ Ենոքյան

Անդամներ՝ Գոռ Գրիգորյան